ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱ ;ՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵ ՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2147-Ն/3

ք. Երևան 27.12.2021 թ

Հայաստանի Հանրապետության ԿՐթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Պ. Ավետիսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2147-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական բյուջեն պարտավորվում է ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ ամրոցի տարածքի պեղումների իրականացման համար «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին հատկացնել՝ **20 138 400** /քսան միլիոն մեկ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ գումար /ներառյալ ԱԱՀ/, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայտնողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. սույն պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետներում կազմակերպության կողմից կատարողական հաշվետվությունները չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի տրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում տեղեկացնում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարել համաձայն N 2 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրի.

2.4.4. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.5. աշխատանքների ավարտից, իսկ փուլային աշխատանքների դեպքում՝ փուլի ավարտից հետո 20-օրյա ժամկետում նախարարություն ներկայացնել ֆինանսական և բովանդակային հաշվետվություն՝ կցելով նաև հանձնման-ընդունման և կատարողական ակտերի պատճենները, աշխատանքների կատարման վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին

համապատասխան, իսկ գնման գործընթացի արդյունքում տնտեսված գումարը վերադարձնել << պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի համաձայն << կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2147-Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ը՝ կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հնագիտության և ազգագրության ինստիտուտ » ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	ք. Երևան, Չարենցի փող., 15
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900018005240
Հ/Հ 900011039386	ՀՎՀՀ 01503104
ՀՎՀՀ 02698732	Հեռ.՝ 010 55-68-96
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
Վ. Գասպարյան (ստորագրություն)	Պ. Ավետիսյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
2021 թ. դեկտեմբերի-23-ին
կնքված N 2147-Ն/3 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

N /կ	Իրականացվելիք միջոցառումներ						
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	աշխատանքների կատարման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	Հուշարձանների ամրակայում, նորոգում և վերականգնում	ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ ամրոցի տարածքի պեղումների իրականացում	Պեղման աշխատանքները իրականացվում են համաձայն սույն Պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի	Պեղման աշխատանքներ	30.09.2022 թ.	20.10.2022թ.	20 138 400 /ներառյալ ԱԱՀ/

Նախարարություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039386
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

_____ Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Չարենցի փող., 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005240
ՀՎՀՀ 01503104
Հեռ.՝ 010 55-68-96
Տնօրեն՝

Պ. Ավետիսյան
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2

2021 թ. դեկտեմբերի-27-ին
կնքված N 2147-Ն/3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՎՈՒՇ ԱՄՐՈՑԻ ՏԱՐԱԾՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ծառայության			
	Տեխնիկական բնութագիրը	Մատուցման	
		հասցեն	ժամկետը
Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի «Տավուշ» ամրոցի պեղումներ՝ հնագիտական աշխատանքներն իրականացնել երկու փուլով՝ ապրիլ-մայիս և հուլիս-օգոստոս ամիսներին, և՛ միջնաբերդի, և՛ ստորին բերդի տարածքում Պեղումների համար նախատեսվող հատվածների ընտրությունը և անհրաժեշտությունը պայմանավորել երեք հիմնական հանգամանքով՝ 1. միջնաբերդի պեղումների շարունակություն, 2. ամրոցի մի շարք հատվածների պեղումներ՝ վերականգնման և ամրակայման նախագիծ կազմելու	ՀՀ Տավուշի մարզ Բերդ համայնք	համապատասխան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2022 թ. սեպտեմբերի 30

	նպատակով, 3. ստորին բերդի մի քանի տեղերում ստուգողական պեղումներ՝ նախորդ տարի հայտնաբերված երկաթեդարյան գտածոների հնագիտական միջավայրը պարզելու և նախաքրիստոնեական հնարավոր շերտեր փաստագրելու նպատակով		

Նախարարություն

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2 շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039386
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Չարենցի փող., 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005240
ՀՎՀՀ 01503104
Հեռ.՝ 010 55-68-96
Տնօրեն՝

Պ. Ավետիսյան
(ստորագրություն)

Կ.Տ